

«ՎԱԵԼԿՈՆ» ՍՊԸ

«ՎԱԵԼԿՈՆ» ՍՊԸ Ընկերությունը 2009թ.-ից Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված գործունեություն իրականացնող առևտրաշինարարական կազմակերպություն է: Շնորհիվ ժամանակի ընթացքում հղկված սկզբունքների և քաղաքականության, Ընկերությունը շուկայում զբաղեցնում է առաջատար դիրք, շարունակաբար զարգացնում և ընդլայնում է գործունեության շրջանակները:

Ընկերության առաքելությունն ու կարգախոսն է՝ մշակել և տրամադրել **Համալիր Ինժեներական Լուծումներ**: Քաղաքականությունն է՝ պահպանել առաջատար դիրքերը բոլոր ներքոնշյալ ուղղվածություններով, թե՛ որպես հուսալի մատակարար, թե՛ որպես շինարար:

Գործունեության առաջին իսկ օրերից Ընկերությունը ներգրավել է առաջադեմ և բանիմաց մասնագետների, ինչը երաշխիք է կատարված աշխատանքների բարձր որակի և պրոֆեսիոնալիզմի: Շուկայի պարբերական անալիտիկ ուսումնասիրությունների, շարունակական ինքնակատարելագործման և գործընկերների հետ բիզնես-նորմատիվային սկզբունքների վրա հիմնված փոխհարաբերությունների շնորհիվ, Ընկերությունը վաստակել է բազմաթիվ առաջատար միջազգային արտադրող կազմակերպությունների վստահությունը, արդյունքում՝ յուրաքանչյուր գործընկերոջ հետ հաստատված անհատական աշխատանքային հարաբերություններ ի նպաստ փոխշահավետ համագործակցության:

Ընկերությունը մասնագիտացած է տեխնիկական հետևյալ ուղղվածություններով՝

- ✓ **Կապիտալ շինարարություն**
 - Հողային աշխատանքներ
 - Հիմքերի, հիմնատակերի իրականացում
 - Կադապարամածի իրականացում
 - Երկաթբետոնե կոնստրուկցիաների իրականացում
 - Ընդհանուր շինարարական աշխատանքներ
- ✓ **Տանիքաշինություն**
 - Հարթ և թեք տանիքի կառուցում
 - Տանիքի կավարամածի իրականացում
 - Տանիքի կառուցում ձևավոր թիթեղից և ճկուն կղմինդրից
 - Տանիքի ջրհորդանների և ջրահեռացման համակարգերի իրականացում
 - Ջերմամեկուսացման և ջրամեկուսացման աշխատանքներ
- ✓ **Էլեկտրականություն**
 - Հաշվարկ և ընտրություն
 - Մալուխների, հաղորդալարերի, ուժային, ուժային-բաշխիչ, մուտքային-սնուցման, բաշխիչ վահանների, Պ.Բ.Մ. համակարգերի, վաքերի, էլ. սնուցման մոնտաժային խողովակների ներմուծում և մատակարարում
 - Էլեկտրամոնտաժային աշխատանքներ
- ✓ **Ճարտարապետական, տարածքային և ներքին լուսավորություն**
 - Նախագծում, դիզայն և 3D մոդելավորում DIALux, Cinema4D, ծրագրերով
 - Լուսատուների, լուսարձակների, լամպերի և տրանսֆորմատորների ներմուծում
 - Տեղադրման և կարգաբերման աշխատանքներ

✓ **Ջուր և կոյուղի**

- Արտաքին, ներքին կոյուղատար և հեղեղատար համակարգերի, տաք և սառը ջրի ներքին ու արտաքին ցանցերի, պոմպակայանների հաշվարկ
- Ջրատար և կոյուղատար դիտահորերի, անձրևընդունիչների, ֆիլտրացիոն համակարգերի մատակարարում և կառուցում
- Պոմպերի, պոմպակայանի, խողովակների և կցամասերի ներմուծում, մատակարարում
- Մոնտաժային, տեղադրման և կարգաբերման աշխատանքներ

✓ **Օդափոխություն**

- Օդատարների, աղմկախլացուցիչների, կարգավորիչ փականների և այլ ձևավոր մասերի արտադրություն
- Օդափոխության համակարգերի, սարքավորումների, օդատարների հաշվարկ
- Ներածման, արտածման, ռեցիրկուլիացիոն և ռեկուպերացիոն համակարգերի, համալրող հանգույցների (սառեցման սեկցիոն համակարգեր, օդատաքացուցիչներ, օդահարիչներ, օդային գոծիչներ, խոնավացուցիչներ), ինչպես նաև համապատասխան ավտոմատացման և վերահսկման սարքերի ներմուծում, մատակարարում
- Մոնտաժային, տեղադրման, ավտոմատացման և կարգաբերման աշխատանքներ

✓ **Օդորակում**

- Օդորակման սարքավորումների, խողովակաշարերի և օդատարների հաշվարկ
- Օդորակման համակարգերի (չիլերներ, ֆանկոյլներ, կոմպրեսոր-կոնդեսատորային բլոկեր, կենցաղային, կիսաարդյունաբերական, արդյունաբերական օդորակիչներ, մուլտիգոնալ համակարգեր, օդի խոնավեցման/չորացման սարքեր և այլն) ներմուծում
- Օդորակման համակարգերի տեղադրում, ավտոմատացում և կարգաբերում

✓ **Ջեռուցում**

- Կաթսայատան հզորության, խողովակաշարերի և հանգույցների հիդրավլիկ հաշվարկ, պոմպերի, կաթսաների, արագային ջերմափոխանակիչների, կուտակային բաքերի, ջրատաքացուցիչների ընտրություն
- Կենցաղային և արդյունաբերական կաթսաների, կոնվեկտորների, սեկցիոն մարտկոցների, խողովակաշարերի, չափիչ, գոծիչ և կարգավորող սարքերի և այլ ջեռուցման պարագաների ներմուծում և մատակարարում
- Ավտոմատ ղեկավարման հանգույցների ինտեգրում
- Կաթսայատների կառուցում
- Մոնտաժային, տեղադրման, ավտոմատացման և կարգաբերման աշխատանքներ

✓ **Շատրվանային համակարգեր**

- 3D մոդելավորում և դիզայն
- Շատրվանային համալիր համակարգերի և համապատասխան պարագաների ներմուծում, մատակարարում
- Կառուցման, տեղակայման, ավտոմատացման և կարգաբերման աշխատանքներ

✓ **Ալյումինե և ապակե կոնստրուկցիաների, դռների, պատուհանների արտադրություն**

- Չափագրում և մոդելավորում
- Ալյումինե պրոֆիլների և աքսեսուարների ներմուծում և վաճառք
- Ֆասադային կոնստրուկցիաների կառուցում և ապակեպատում
- Ալյումինե դուռ-լուսամուտների պատրաստում և մոնտաժ
- Ավտոմատ և շարժական ապակե կոնստրուկցիաների պատրաստում և տեղադրում
- Ալյումինե ճաղավանդակների արտադրություն և վաճառք

Բոլոր ինժեներական պլանավորումները և հաշվարկներն իրականացվում են մասնագիտական ծրագրային ապահովմամբ, այն է՝ AutoCAD, 3D MAX, Design Simulator, Conditioning Selection, LightScape, DIALux, Cinema4D: Դա աշխատանքային խմբին հնարավորություն է տալիս պատվիրատուին ակներև ցուցադրել աշխատանքների իրական ծավալները և պլանավորված վերջնական արդյունքը:

Աշխատանքներն իրականացվում են տարբեր տեսակի արտադրական, հասարարական և բնակելի նշանակության կառույցներում, ինչպիսիք են՝ գործարաններ, բիզնես կենտրոններ, առևտրի կենտրոններ,

բազմաֆունկցիոնալ շինություններ, հյուրանոցներ, դպրոցներ, հիվանդանոցներ, ռեստորաններ, բնակելի շենքեր և այլն (իրականացված աշխատանքների մասին մանրամասն ինֆորմացիա կարող եք գտնել ընկերության պաշտոնական կայքում՝ www.waelcon.am/works):

«ՎԱԵԼԿՈՆ» ՍՊԸ-ի գործընկերներն են հանդիսանում արտերկրյա առաջատար արտադրող կազմակերպություններ: Կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ տարածքում հետևյալ ապրանքանիշերի և ընկերությունների բացառիկ ներկայացուցիչ՝ Clint (Իտալիա), Novair (Իտալիա), DEKON (Չինաստան), MECO (Չինաստան), NED (NEW ENGINEERING DISCOVERIES) (Ռուսաստան), Montair (Իտալիա), LTS Licht (Գերմանիա):

Գործընկերներ են հանդիսանում նաև՝ VBW Engineering (Լեհաստան), SIME (Իտալիա), Fläkt Woods (Ֆինլանդիա), MIDEA (Չինաստան), MDV (Չինաստան), IEK GROUP (Ռուսաստան), Thorn Lighting (Մեծ Բրիտանիա), EXPERT-CABLE (Ռուսաստան), Nowodvorski Lighting (Լեհաստան), Forma Lighting (Մեծ Բրիտանիա), Hitema (Իտալիա), SAFE-RAIN, S.L. (Իտալիա), Fontana Fountains SA (Հունաստան), JAGO (Իտալիա), ՏA-RA (Թուրքիա), OMS (Սլովակիա), Lena Lighting SA (Լեհաստան), dormakaba Holding AG (Շվեյցարիա), DoorHan (Ռուսաստան), Reynaers Aluminium (Բելգիա), Sistem Aluminyum / AluTech (Թուրքիա), Teclumen (Իտալիա), Fujitsu General (Ճապոնիա), Griven (Իտալիա), NEXIA (Իսպանիա), CORTIZO (Իսպանիա), Giesse (Իտալիա), Aluprof S.A., Grupakety Group (Լեհաստան), Sylvania (Գերմանիա), LTS LICHT & LEUCHTEN GMBH (Գերմանիա), Hammer (Չինաստան), LEUCOS (Իտալիա), KOSPEL S.A. (Լեհաստան), VOSSLOH SCHWABE (Գերմանիա), Il Fanale Group (Իտալիա), Zonca (Իտալիա), Linea Light (Իտալիա), AWEX (Լեհաստան), NormaLUX (Իսպանիա) և այլ ընկերություններ:

Կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքների հուսալիությունը և օպերատիվությունը պայմանավորված են ադմինիստրատիվ խմբի բարձր որակավորմամբ, ճարտարապետների, ճարտարագետների, տնտեսագետների և տեխնիկական անձնակազմի պրոֆեսիոնալիզմով, մեծ փորձի և ինովացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ:

«ՎԱԵԼԿՈՆ» ՍՊԸ Ընկերության անձնակազմը բաղկացած է 60-ից ավել տարբեր ոլորտների, այդ թվում նաև շինարարության իրականացման ոլորտի աշխատակիցներից, որոնց շարքերը պարբերաբար համալրվում են կազմակերպության դինամիկ աճին համընթաց:

«ՎԱԵԼԿՈՆ» ՍՊԸ Ընկերության հիմնական ենթակառուցվածքներն են.

- Հիմնական գրասենյակ.
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Վաղարշյան 12, 7-րդ հարկ,
Մակերես՝ 200 մ²
Տեղակայված ստորաբաժանումներ՝ ադմինիստրացիա, մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, ֆինանսական և հաշվապահական հաշվառման բաժին, նախագծային բաժին, ներմուծման, նախահաշվային և վաճառքի բաժին, ինժեներական բաժին, շինարարական ստորաբաժանում և կոնֆերանսների դահլիճ:
- Լոգիստիկ կենտրոն.
Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Զովունի 1-ին փ. թիվ 120 վարչական շենք
Մակերես՝ 1700 մ²
Տեղակայված ստորաբաժանումներ՝ երկրորդական գրասենյակ, պահեստ, սպասարկման կենտրոն, մեքենա-մեխանիզմների հավաքակալան-կենտրոն, դրանց գործունեությունը ապահովող լոգիստիկայի ստորաբաժանում:
- Արտադրամաս.
Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Զովունի 1-ին փ. թիվ 120 վարչական շենք
Մակերես՝ 460 մ²
Տեղակայված ստորաբաժանումներ՝ օդափոխության-օդորակման համակարգերի օդատարների, կարգավորիչ փականների և այլ ձևավոր դետալների արտադրական ստորաբաժանում:

«ՎԱԵԼԿՈՆ» ՍՊԸ Ընկերությունը ունենալով վերը նկարագրված աշխատանքային հնարավորությունները և ձեռքբերումները, որդեգրել է «ՓԱԿ ՑԻՎԼ»-ի սկզբունքը՝ այն է.

նախագծերի հաշվարկ, ադապտացում և ծավալավորում, գնագոյացման և նախահաշվային բյուջեի կազմում, օգտագործվող սարքավորումների, նյութերի և ապրանքների ներկրում անմիջապես արտադրողից, համալրող կոմպոնենտների արտադրություն, կառուցման, տեղակայման, ավտոմատացման և կարգաբերման

աշխատանքների իրականացում՝ առկա սեփական շինարարական ստորաբաժանման ռեսուրսներով, արդյունքում ավարտական հանձնում պատվիրատուին, հետագա երաշխիքային շրջանում անվճար սպասարկման ծառայությամբ:

«ՎԱԵԼԿՈՆ» Ընկերությունը ցուցաբերում է յուրահատուկ մոտեցում յուրաքանչյուր հաճախորդին և նախագծին, տրամադրելով համալիր տեխնիկական լուծումներ, որոնք ընձեռում են ընտրության լայն հնարավորություններ:

Հարգանքներով՝

«ՎԱԵԼԿՈՆ» ՍՊԸ